

Մ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ



**ԻՆՉՊԵՍ ԺՈՒՏ ՄՏԱՆԱԼ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

1995
A
8R6h2
II



Հայագրագիտական կենտրոնի Կ. Կրթագրական կենտրոնի 1937

վոր
վազրո
3.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՊԵՏԱՊԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1937

Տեխ. ձևավոր. և սրբապր. Ս. Հախվերդյան

Ռեհլան-Հրատ.-Ֆյուրր

Բաղլիտ N 2260.

Գյուղհրատի տպարան, Ճերան

Գամփեր N 50—64.

Տերած 200

Յ Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Այս զըջույկում մենք կպատմենք կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին և մենատնտեսներին այն մասին, թե ինչ պետք է իմանալ և անել, վորպեսզի հեշտությամբ ստանալ կրակից, փոթորիկներից, տարափից, ցրտահարումից, թրջումից, անասունների անկումից, հրդեհներից և այլ տարերային աղետներից առաջացած վնասներն:

Վորպեսզի պարզ լինի ու հեշտ լինի կարգալը մենք այստեղ կպարզաբանենք մի քանի բառեր, վորոնք գործ են անվում ապահովագրական գործում:

1. Կոպարային ապահովագրական նորմա — դա այն գումարն է, վորով անասունները, ցանքերը, շենքերը և այլ գույք ապահովագրվում են պարտադիր կարգով:

2. Ապահովագրական վճարում — դա այն վճարումներն են, վոր կոլտնտեսությունները, կոլտնտեսականներն ու մենատնտեսները պարտավոր են յուրաքանչյուր տարի մուծել Պետապին ապահովագրված գույքի համար: Որինակ, կոլտնտեսականի կովի ապահովագրական վճարումը կազմում է տարեկան 6 ո. 09 կոպ., այդ նշանակում է, վոր կոլտնտեսականը պետք է վճարի իր կովի ապահովագրության համար տարեկան 6 ո. 09 կ.:

3. Վնասների լուծարում — այս բառերով կոչվում են յոր գործողությունները, վոր պետք է կատարի

գյուղական կամ շրջանային սուպանովագրական հանձնա-
ժողովը, վորպեսզի վորոշի, թե վորքան պետք է վճարել
տուժած կոլտնտեսությանը, կոլտնտեսականին կամ աշ-
խատավոր մենատնտեսին:

4. Սուպանովագրական վարձատրություն — դա այն
գումարն է, վորը վճարում է Պետապը կոլտնտեսությա-
նը, կոլտնտեսականին կամ մենատնտեսին դժբախտ դեպք՝
անասունները անկում, հրդեհ, կարկտահարում և այլն
պատահելիս:

Այստեղ պետք է ասել, վոր սուպանովագրական վար-
ձատրությունը չպետք է սուպանովագրական գումարից
(սուպանովագրական սորմա) և վնասված կամ փչացած
փոխքի ինկական արժեքից ավելի բարձր լինի: Յե՛վ դա
ճիշտ է, քանի վոր սուպանովագրության հաշվին շահվել
չի կարելի: Այս կանոնը պետք է միշտ հիշել յուրաքանչ-
յուր կոլտնտեսություն, կոլտնտեսական և մենատնտես:

ԳՄԻՆ ԳՅԱՐԳԱՅԻ ԺԱՄԿ ՈՇՎԷ ԵՍ ԺԱՄԿ ԲՅԱԿԱ ԺԿԱԺԳՈՒՅԻ
ՃԳՈՔ ԳՄՈՂՈՒԻ ԳՄՈՒՆԱԳ ԺԱՄԱԳ ԺԻ ԳՄՄՄԱՆՅԱՐԳԱՅԻ ԲՈՒՍՎՈՒ
ՆՈՒՅՈՒՆՆԱԿԱԳՐԱԿՈՒՄԱԿԱ ՆՈՒԹԵՍ ՄԻ
ԱՎԱ ԱՐ — ԱՆՊՈՒՄ ՄԱԲԱԳՐԱԿՈՒՄԱԿԱ ԱՊԿԱՂԱԿՈՒՄԻ .1
Վ ԳՂՄԳՄԻՆ՝ ԳՂՄԳՄԱՐ ԳՂՄՄՄՆՈՒՍԱՄԱ ԽՈՂՈՒԻ ԵՎ ԱՂԱՆՈՐ
ՎՈՐԳԱՅԻ ԳՂԿԱՈՂԱԿԱ ԱՄ ՆՈՒԿՐԱԿՈՒՄԱԿԱ ԳՂԱՐ ԴԱ
ՆՈՂԱՅԻ ԱՎԱ ԱՐ — ՆՈՂԱՅԻ ՄԱԲԱԳՐԱԿՈՒՄԱԿԱՆ .2
ԱՂՄՄՄԱԲԱՍԺՈՒՄԱՅԻՈՒ ԳՂՄՄՄՆՈՒՅԻ ԱՂԱՍԺՈՒՄԱՅԻՈՒ ԳՂԻ ԱՄ ԱՂՄՄ
ՎԳԱՍ ԳՂՈՂՆԱԳԱԳՂՈՒ ԱՄ ԳՂԿԱՈՂԱԿԱ ԳՂՄՄՄՆՈՒՄԱՄԱՆՆ ԵՍ
ՎԳՈՒ ԴԱՆԱՅ՝ ԺԳՂՈՒՔ ԾԱԿԳՐԱԿՈՒՄԱԿԱ ԱՊԿԱՈՒՄՔ ԽՃՆՈՆ
ԳՆՈՂԱՅԻ ՄԱԲԱԳՐԱԿՈՒՄԱԿԱ ՎՂՈՒՅԻ ԺԱԲԱՍԺՈՒՄԱՅԻՈՒ ՎՂԱՄ
Վ ՆՈՂԱՄԱՆՅՄ ԲՂԱ ԱՐՈՒՅԻ 80 .Ն Թ ՄԱԲՄԳԱՍ Վ ՆՈՒՆՐԱՅԻ
ՈՒՄԱԿԱ ՎՂՈՒՅԻ ԳՂ ՎԳՄԱԻ Վ ԳՂԱԿԱ ԳՄԱԲԱՍԺՈՒՄԱՅԻՈՒ ԳՂԻ
ԱՎ 80 .Ն Թ ՄԱԲՄԳԱՍ ԴԱՆԱՅ՝ ԱՂՎԱՂԳՐԱԿ
ԱՄ ՆՈՒԿՅՈՒՅԻ ԽՈՂՈՒՆԱԳ ԱՂԱ — ՆՈՂԱՍԺՈՒՅԻ ՎԳՄՄՄԱՄԻ .3
ՎԳԱՍԱՎ Վ ԳՂԱԿԱ ԳՂԻ ԳՂՄՄՄՆՈՒՅԻ ԱՂՐՈՒՃԳՐ ԳՂՈՂԱՅԻ ԱՂԱ

5100

Գ Լ Ո Ւ Խ 1



ԻՆՉՊՈՍ ԱՊՈՆՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՍՏՈՆՈՒ ԳՅՈՒՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ՍՏՏԵԼՈՒ ԴԵՊՐՈՒՄ

Պետք է լավ իմանալ, թե վոր դեպքերում է Պետապըն ապահովագրական փնասներ հասուցում տուժած տնտեսութեանն անասուններ սատկելիս և վոր դեպքերում չի հասուցում:

Պետապն անասնատիրոջն ապահովագրված անասունի անկման համար վարձատրութեան տալիս է այն դեպքերում միայն, յեթե այդ դեպքն անասնատիրոջ՝ առանձին կորսնտեսութեան, կորսնտեսականի և մենատնտեսի կամքից անկախ պատճառների հետևանք է յեղել, այսինքն՝ 1) հիվանդութեան, բնական մահվան, 2) դժբախտ դեպքի (շանթահարման, հեղեղումի, յերկրաշարժի, հրդեհի և այլն), 3) յեթե ապահովագրված անասունը մորթվել է անասնաբուժի կամ անասնաբուժակի կարգադրութեամբ վարակիչ հիվանդութեան վորոշելու կամ կանխելու նըպատակով:

Ահա թե վոր դեպքերումն է Պետապն ապահովագրական վարձատրութեան տալիս գյուղատնտեսական անասուններ ապահովագրելու պծով:

Իսկ վոր դեպքերում Պետապն ապահովագրական վարձատրութեան չի վնարում ստեղծ անասունների համար:

Պետապը կորսնտեսութեանը, կորսնտեսականին և մենատնտեսին սատկած անասունների համար ապահովագրական վարձատրութեան չի վճարում այն դեպքերում, յեթե անասնատիրը մեղավոր է անասունի անկման համար

— այսինքն յեթե այդ տեղի յե ունեցել անասնատիրոջ սխալ գործողությունների կամ անհրաժեշտ միջոցներ ձեռք չառնելու հետեվանքով առաջին՝ — յեթե անասունի մահվան պատճառը յեղել ե հիվանդություն կամ այնպիսի դժբախտ դեպք, վորը տեղի յե ունեցել բացահայտ անասնտեսվարության՝ անասունի ուժասպառ լինելը — թերի կերակրելու, կեղտոտ կեր տալու, սխալ լծելու, անհարմար շնորում պահելու, հիվանդ անասունին վատ խնամելու, անասնաբուժին, անասնաբուժակին կամ գյուղխորհրդին անասունի հիվանդության մասին չհայտնելու հետեվանքով: Ընդհանրապես, յուրաքանչյուր անասունի՝ թե ապահովագրված և թե չապահովագրված, որինակ, մտողաչ անասունի հիվանդանալու մասին անասնատերը պարտավոր ե իսկույն հայտնել անասնաբուժական անձնակազմին կամ գյուղխորհրդին: Սյդ շատ անհրաժեշտ ե, վորովհետե յուրաքանչյուր հիվանդություն կարող ե վարակիչ լինել (ժանտախտ, սիրիրախտ, խլախտ և այլն) և մի գուցե անհրաժեշտ կլինի վարակված անասունին անմիջապես սպանել, վորպեսզի փրկված լինեն մնացած անասունները: Իսկ յեթե նույնիսկ հիվանդությունը վարակիչ չե, այնուամենայնիվ պետք ե անասնաբուժական շտապ ողնությամբ թույլ չտալ, վոր անասունը սաակի:

Յեթե անասնաբուժական հսկողությունը վորոշում ե, վոր հիվանդությունը վարակիչ չե, ապա հիվանդ անասունի տերն ու այլ անասնատերեր պետք ե պահպանեն բուժման նախագրուշական այն բոլոր միջոցները, վոր ցույց կտա անասնաբուժը: Յեկրորդ՝ յեթե անասունի մահը տեղի յե ունենում անխնա շահագործման կամ վրնասարար վերաբերմունք ունենալու հետևանքով, որինակ, անասունին նրա ուժից վեր աշխատեցնելու, ծեծելու, խիստ քշելու, փաստակար կեր տալու, տաքացած և քրքրոնած անասունին սառը ջուր տալու և այլն: Յեկրորդ՝ յեթե անասնաբուժը կամ անասնաբուժակը վորոշում

և, վոր սատկած անասունը վարակված է յեղել այն պատ-
ճառով, վոր նրա տերը չի պահպանել վարակիչ հիվանդու-
թյուններէ դեմ պայքարելու վերաբերյալ պարտադիր վո-
րոշումներն ու անասնաբուժական սանիտարական կանոն-
ները:

Այս դեպքերում վոչ միայն ապահովագրական վար-
ձատրություն չի վճարվում, այլև յեթե գյուղական ա-
պահովագրական հանձնաժողովը սատկած անասուններէ
մասին ակտ կազմելիս, ինչպես նաև Պետապի տեսուչը
կամ շրջանային ապահովագրական հանձնաժողովը ակտն
ստանալիս և հաստատելիս վորոշում է, վոր կոլտնտե-
սային անասունի անկումն անտնտեսվարության, վնասա-
րար գործողություններէ կամ անխնա շահագործման
հետևանք են յեղել, ապա շրջանային ապահովագրական
հանձնաժողովն այդ մասին հատուկ վորոշում է կայաց-
նում, վորի մասին անմիջապես հայտնում է դատախազա-
կան հսկողությանը մեղավորներին պատասխանատվության
յենթարկելու համար: Ի հարկէ, այդ այդպես ել պետք է,
վորովհետև, կոլտնտեսային գույքը պետք է պաշտպանել,
իսկ նրանք, ովքեր այդ գույքը չեն պաշտպանում, ժողո-
վրդի թշնամին են, կոլտնտեսային կարգերի թշնամի:

Բացի այդ, անկախ անասունի անկման պատճառնե-
րից, սատկած գյուղատնտեսական անասունների համար
ապահովագրական վարձատրություն չի տրվում այն դեպ-
քերում, յեթե նրանց տերերը՝ կոլտնտեսությունները, կոլ-
տնտեսականներն ու մենատնտեսները չեն կատարում իրենց
համար սահմանված պարտադիր կանոնները: Առաջին՝ յեթե
անասունների անկման ակտեր կազմելիս հայտարարվում
է, վոր անասունների ցուցակագրման (հաշվառման) ժա-
մանակ, վորը կատարվում է տարեկան մեկ անգամ, պար-
տադիր ապահովագրության գծով, տվյալ տնտեսության
մեջ ապահովագրումից թազցված են յեղել տվյալ տեսա-
կի անասուններ: Այդ, ի հարկէ, միանգամայն ճիշտ է,

յեթե թագցրել ե հաշվառումից, ուրեմն և չի ապահովա-
գրել, իսկ յեթե չի ապահովագրել, ուստի և վոչինչ չը-
պետք ե ստանա: Ինքնըստինքյան պարզ ե, վար այդ պա-
տիժը (ապահովագրական վարձատրությունից զրկելը)
տրվում այն դեպքերում միայն, յեթե անասունին թագ-
ցրել են դիտավորյալ կերպով, այլ վոչ պատահաբար:
Պատահականության, ակամա սխալի համար կոլոնտեսու-
թյունը, կոլտնտեսականը և մենատնտեսը չպետք ե տուժին:

Յերկրորդ՝ յեթե գյուղատնտեսական անասունի մահ-
վան մասին 24 ժամվա ընթացքում կոլտնտեսականներն
ու մենատնտեսները չեն հայտնում գյուղխորհրդին, իսկ
կոլտնտեսությունները՝ գյուղխորհրդին և ապահովագրա-
կան տեսչին: Ապահովագրվողն այդ ժամկետը չպետք ե
խախտի, գյուղատնտեսական անասունի մահվան մասին
նա միշտ պետք ե հայտնի 24 ժամվա ընթացքում:

Յերրորդ՝ յեթե շրջանային ապահովագրական հանձնա-
ժողովի կողմից արդեն իսկ հաստատված ակտով այդ ակ-
տի հաստատման օրվանից վեց ամսվա ընթացքում, պա-
հանջ չի առաջագրված՝ ապահովագրական վարձատրու-
թյուն վճարելու մասին:

Չորրորդ — այն դեպքում, յեթե անասունը տնտեսա-
կան նկատառումներով կամ զժբախտ պատահարի հետե-
վանքով մորթված ե վորպես մսացու, կամ յեթե մորթ-
ված անասունի միսը պիտանի յե ճանաչված ուտելու հա-
մար: Ի հարկե, այդ ել ճիշտ ե: Չե վոր ըստ կանոնները
ապահովագրությունը կնքվում ե անասունները սատկելու
դեպքերի համար միայն: Անասունին գողանալու և նրա
կորչելու համար Պետապը նույնպես պատասխանատու
չե: Տիրոջ համար անասունը կորել ե, բայց Պետապը նրա
համար վոչինչ չի վճարում, գտնելով, վոր անասունին
պետք ե պաշտպանի նրա տերը, յեթե վատ ե պաշտպա-
նել, ուրեմն, ինքն ե մեղավոր:

Մենք արգեն ասացինք, վոր այն անասունները, վոր

վոնք յենթակա յեն պարտադիր կողարային ապահովա-
գրութեան, յուրաքանչյուր տարի պետք է ցուցակագրը-
վեն կոլտնտեսութեան, կոլտնտեսականների և մենատըն-
տեսների կողմից: Այդ անասուններն, ի հարկե, ապահո-
վագրված են համարվում, բայց այստեղ պետք է ասել,
վոր պարտադիր կարգով և այն ել ձրիաբար ապահովա-
գրված համարվում են այն անասունները, վորոնք ցուցա-
կագրումից հետո ամբողջ տարվա ընթացքում ապահովա-
գրական հասակի յեն հասնում կամ, դիցուք, տնտեսու-
թյունը նոր անասուն է գնում: Որինակ, կոլտնտեսական
Մուշեղ Կարապետյանը մայիս ամսում, ցուցակագրման
ժամանակ ունեցել է մեկ կով 5 տարեկան և յերկու
ամսական հորթ: Ուրեմն, Կարապետյանի միմիայն մեկ
կողն է ապահովագրված յեղել, վորի համար նա վճարել է
Պետապլին 6 ու. 9 կ. ամբողջ տարվա համար: Կոլտնտեսա-
կան Կարապետյանը նոյեմբեր ամսում գնել է ևս մեկ
կով, իսկ հորթը դարձել է 8 ամսական: Այսպիսով Կա-
րապետյանն ունի 2 կով և մեկ հորթ ութ ամսական և
դրանք բոլորն է ապահովագրված են համարվում թեև
նա իր մեկ կովի ապահովագրութեան համար է միայն
վճարել: Ուրեմն, յեթե, դիցուք, դժբախտ դեպքի հետե-
վանքով սատկեն այդ յերեք անասունները, ապա Պետապը
նրանց բոլորի համար ել պետք է վճարի:

Բոլորն ել այժմ լավ գիտեն, վոր յուրաքանչյուր
սատկած անասունի համար անպայման պետք է ակտ
կազմել և այդ ակտը կազմում է գյուղական կամ շրջա-
նային ապահովագրական հանձնաժողովը: Թեև ակտի ճշ-
տութեան համար պատասխանատու յե հանձնաժողովը,
բայց և այնպես որենքով ակտը կազմելու ժամանակ ան-
պայման պետք է ներկա լինի անասնատերը՝ կոլտնտե-
սություններում վարչութեան նախագահը, իսկ կոլտնտե-
սականի կամ մենատնտեսի տնտեսություններում—անտե-
սութեան գլուխը: Ակտ կազմելու և անասունների

անկման պատճառները պարզելու համար, հանձնա-
ժողովը դեպքի վայրը մեկնում է վոչ ուշ քան սատկած
անասունի տիրոջից տեղեկություն ստանալուց 24
ժամվա ընթացքում: Իրա համար ել անասնատերը՝ կոլ-
տնտեսությունը, կոլտնտեսականը կամ մինատնտեսն ան-
պայման պետք է հանձնաժողովին առաջադրի սատկած
անասունի դիակն, այսպես հանձնաժողովն ակտ կազմելու
իրավունք չունի: Ի հարկե, յեթե անասունը սատկել է
վարակիչ հիվանդությունից և դա հաստատված է անաս-
նաբուժի կամ անասնաբուժակի կամ ել գյուղխորհրդի
նախագահի կողմից, ապա անասնատերն անպայման պետք
է հեռացնի դիակը կամ թաղի գյուղխորհրդի նախագահի
և յերկու կամ յերեք վկաների ցուցումով և ներկայու-
թյամբ:

Բոլոր կազմված ակտերն ուղարկվում են շրջանային
ապահովագրական տեսչությանը: Այնուհետև, այդ ակտե-
րը քննվում են շրջանային ապահովագրական հանձնա-
ժողովի նիստերում, հաստատվում են կամ մերժվում: Այդ
վերջումների մասին անասնատերը պետք է իրազեկ լի-
նի, ուստի ապահովագրական տեսուչը յերեք որվա ըն-
թացքում այդ մասին անպայման նրան հայտնում է:

Ապահովագրական տեսուչը պարտավոր է տուժած տըն-
տեսության վնասները վճարել որենքով սահմանված ժամ-
կետներում, այն է՝ կոլտնտեսությանը՝ ակտը հաստատե-
լուց հետո 5 որվա ընթացքում, կոլտնտեսականին՝ 10
որվա ընթացքում և մենատնտեսին՝ 15 որվա ընթացքում:
Հետևապես, յեթե տուժած տնտեսությունը ժամանակին
չի ստանում իր ապահովագրական վարձատրությունը,
ապա նա, ի հարկե, պետք է պահանջի, վար անմիջապես
վճարեն:

ՎՆԱՍՎՈՍԻ ԳՅՈՒՂՈՏՆՏԵՍԱԿՈՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱ-
ՏՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

Բոլորն ել լավ դիտեն, վոր մինչև 1934 թ. գյուղա-
տնտեսական մշակույթները ՀԽՍՀ-ում ապահովագրվում
էին, գլխավորապես, կարկտահարումից, Սակաջն, կոլ-
տնտեսությունների, կոլտնտեսականների և մենատըն-
տեսների ցանկութլամբ 1935 թվից գյուղատնտեսական
մշակույթներն ապահովագրվում են՝

Ս. Ա աղին. Հացահատիկային և բակլային մշակույթ-
ների ցանքերը—բոստանը, բանջարանոցը, խաղողի և
պտղատու այգիների բերքը կարկտահարումից, տարա-
փից, փոթորիկներից, ցրտահարումից, թրջումից, փրտու-
մից և հեղեղումից, իսկ կոլտնտեսություններում՝ նաև
չհնձված ցանքերը հրդեհից:

Յեղիբոդի՝ ձխախոտի և բամբակի ցանքերը բոլոր տա-
րերային աղետներից, ինչպես նաև այդ մշակույթների
փաստառեններից և հիվանդություններից: Իսկ յեթե ցան-
քերը տուժել են այլ պատճառներով, ապա, պարզ է, վոր
Պետապը պատասխանատու չէ և փասաներ չի վճարում:
Շատ հաճախ ասում են, վոր, ճաշանացան ցորենի ցան-
քերը տուժել են յերաշից և Պետապը պետք է ապա-
հովագրական վարձատրություն վճարի՝ բայց նրանք
մոռանում են, վոր ցորենի և դարու ցանքերը յերաշից
չեն ապահովագրվում: Կամ թե շատ հաճախ մենք լսում
ենք, վոր, Ապտղատու ծառերը կամ խաղողի վաղերը փը-
չացել են ցրտերից, հետեվապես, Պետապը պետք է վճա-
րի փասաները: Յեվ այս դեպքում ել մոռանում են, վոր
Պետապը վոչ թե ծառեր և վաղեր է ապահովագրում,
այլ պտղատու և խաղողի այգիների բերքը միայն: Այլ

բան ե, յեթե կոլտնտեսութիւններն ու կոլտնտեսական-
ները պահանջ դնեն, վոր գյուղատնտեսական մշակույթ-
ներն ապահովագրվի բոլոր տարերային աղետներից և
Պետապր գրան համաձայնվի, այդ դեպքում, ի հարկե, նա
պարտավոր ե վճարել նաև այլ պատճառներից առաջացած
վնասները, որենքը հրապարակելուց հետո:

Յեր ե սկսվում յեվ յեր վերջանում ապահովագրու-
թյունը

Ապահովագրական որենքներով ճշտորեն վորոշված ե,
թե յերը ե սկսվում Պետապի պատասխանատվութիւնը և
յերը վերջանում ապահովագրութիւնը: Յանովի (դաշտա-
լին և բանջարանոցային) գյուղատնտեսական մշակույթ-
ների (ցորենի, գարու, յեգիպտացորենի, կարտոֆիլի և
այլն) վերաբերմամբ ապահովագրական պատասխանատու-
ութիւնը սկսվում ե ծլելու որվանից միայն, իսկ մինչե
ծլելը ցանքերը չեն համարվում ապահովագրված: Շատ
հաճախ ցանքերը գանազան պատճառներից (յերաշտից և
այլն) մինչև ծլելն փչանում են, իսկ ցանքատերերն ա-
պահովագրական վարձատրութիւն են պահանջում Պետա-
պից: Ի հարկե, դա միանգամայն սխալ ե:

Տունկային մշակույթների վերաբերմամբ, վորոնք
զարգանում են սածիլների ձևով, որինակ, ծխախոտը,
կաղամբը, սրանց ապահովագրական պատասխանատվութիւ-
նը սկսվում ե սածիլները տնկելու պահից միայն: Այսպիսով,
յեթե մինչև տնկելը նրանք փչանում են, ապա Պետապը
պատասխանատվութիւն չի կրում:

Պտղատու այգիների վերաբերմամբ Պետապի պա-
տասխանատվութիւնն սկսվում ե ծաղկելու որվանից մի-
այն, այսինքն, ծաղկային բողբոջներ գոլանալու որվանից,
իսկ խաղողի այգիների վերաբերմամբ փնջեր տալու, այլ
խոտքով ծաղկելու պահից (советия):

Լինում են նաև դեպքեր, յերբ սաստիկ սառնամանիք-
ներից փչանում են պտղատու և խաղողի այգիներ, սա-
կայն, ինչպես մենք վերն ասացինք, Պետապը դրա հա-
մար պատասխանատվութուն չի կրում, քանի վոր ծառերն
ու վագերը չեն ապահովագրվում, այլ ապահովագրվում
ե նրանց բերքը միայն:

Բացի այդ, ապահովագրութունը վերջանում ե այն
պահից, յերբ բերքը հավաքվում ե, այլ խոսքով, խոտհար-
քից, ցանքը հնձելուց, պտղատու և խաղողի այգիներում
պտուղներ քաղելուց հետո դրանք ապահովարված չեն
համարվում:

Ի՞նչ պե՛տ ե անի կոյսնեստությունը, կոյսնեստականն ու
մեկնանեստը գյուղանեստական մեակույթները արեւային
աղեսներից վնասվելուց հետո

Առաջին: Թույլ չտալ վորպեսզի տարերային աղետից
վնասված տարածության վրա անասունները տրորեն վողջ
մնացած գյուղատնտեսական մշակույթները և ըստ հնա-
րավորության փրկել լրացուցիչ մշակմամբ (բուկլիցով,
քաղհանով, վնասատուներից պաշտպանելով և այլն) ու
այդ մշակումը կազմակերպել ժամանակին և ճիշտ:

Յեւկուրդ: Ըստ հնարավորության շուտ, անհապաղ,
հայտնել գյուղխորհրդին (իսկ կոլտնտեսությունները, բա-
ցի այդ, պարտավոր են հայտնել նաև շրջանային ապա-
հովագրական տեսչին) տեղի ունեցած տարերային աղետի
մասին, ընդվորում, այդ հայտարարությունն անպայման
պետք ե լինի զբավոր և համենայն դեպս վոչ ուշ քան
գյուղատնտեսական մշակույթները տարերային աղետնե-
րից վնասվելու հանգամանքը հաստատվելու պահից հինգ
որվա ընթացքում:

Այդ հայտարարության մեջ պետք ե պարզորոշ և
ճիշտ ցույց տրված լինի, թե յերբ ե տեղի ունեցել տա-
րերային աղետը՝ կարկտահարումը, տարափը, փոթորիկը,
ցրտահարումը, հեղեղումը և այլն, վնասված տարածու-

թյան չափը, յուրաքանչյուր դյուղատնտեսական մշակույթի համար առանձին, փաստածության մոտավոր աստիճանը, պահանջվում է արդյոք կրկնացան և ինչպիսի տարածության վրա, ինչպես նայե այն, թե արդյոք անհրաժեշտ է ֆնանսների շտապ լուծարում: Այս բոլորը շատ կարևոր է, քանի վոր շրջանային ապահովագրական հանձնաժողովը պետք է ստանա այս տեղեկությունները, վորպեսզի հնարավորություն ունենա ժամանակին մեկնել դեպքի վայրը և պարզել ֆնանսների չափը:

Յերրորդ: ֆնանսները լուծարելու ժամանակ տրամադրել լուծարքային հանձնաժողովներին և Պետապի որդաններին իր ունեցած բոլոր այն ավայլները, վորոնք վերաբերում են գյուղատնտեսական մշակույթների փչացած կամ փաստած տարածությանը և բացի այդ, ամեն տեսակ աջակցություն ցույց տալ շրջանային ապահովագրական հանձնաժողովին ֆնանսների չափը վորոշելիս: Այս բոլորն, իհարկե, արվում է ապահովագրվողների իրենց ոգտին, նրա համար, վորպեսզի վորքան կարելի յե շուտ և ճիշտ վորոշվի և վճարվի ապահովագրական վարձատրությունը:

Միաժամանակ, այստեղ պետք է ասել, վոր բոլոր տարածությունների և ֆնանսների չափի մասին տրված հայտերն ու տեղեկությունները պետք է ճիշտ լինեն, քանի վոր կեղծ և հնարավի հայտեր տալու համար կորսնտեսությունը, կորսնտեսականն ու մենատնտեսը քրեական պատասխանատվության են յենթարկվում: Յեվ դա միանգամայն ճիշտ է, քանի վոր չի կարելի խաբեբայությամբ պետությունից ստանալ այն, ինչ վոր չի հասնում:

Վճ դեպքերում Պետապր չի հասուցում գյուղացեսեսական մեակույթներին պահանջած վնասները

Պետական ապահովագրությունը վարձատրություն չի վճարում գյուղատնտեսական մշակույթների՝ տարերային աղետներից առաջացած ֆնանսները հետևյալ դեպքերում՝

Առաջին — յեթե գյուղատնտեսական մշակույթը փր-
չացել է վոչ այն պատճառներից, վորոնցից Պետապն ապա-
հովազրում է և ապա յեթե գյուղատնտեսական մշակույ-
թը փչացել է տիրոջ՝ կոլտնտեսության, կոլտնտեսականի
և մենատնտեսի մեղքով, նրա բացահայտ անտնտեսավարու-
թյան, այդ մշակույթների պաշտպանության բացակայու-
թյան կամ դիտավորյալ գործողությունների հետևանքով:

Յեւրոդ. Յեթե ցանքերը վերցված է ապահովա-
զրական պատասխանատվությունից շրջանային ապահովա-
զրական հանձնաժողովի վորոշմամբ:

Բանը նրանում է, վոր շրջանային ապահովազրական
հանձնաժողովին իրավունք է վերապահված ստուգելու
ապահովազրված գույքի գրությունը: Յեւ վ ահա, յերբ ա-
պահովազրական տեսչությունը պարզում է, վոր կոլտնտե-
սությունը կամ կոլտնտեսականը (տնտեսության վոչ հան-
բայնացված մասի վերաբերմամբ) կամ մենատնտեսը բա-
ցահայտ անտնտեսվար կամ ֆրասարար վերաբերմունք է
ունեցել դեպի ապահովազրված գույքը, ապա շրջանային
ապահովազրական հանձնաժողովը վորոշում է դադարեց-
նել ապահովազրությունը մինչև նկատված բացերը վե-
րացնելը:

Յեւրոդ. Յեթե փչացած գյուղատնտեսական մշակույ-
թը կրկնացանված չի յեղել թեև ըստ տարվա ժամանակի
այդ հնարավոր է յեղել: Լինում են դեպքեր, յերբ շրջա-
նային հանձնաժողովը, վորի կազմի մեջ մտնում են նաև
հողբաժնի վարիչն ու շրջանային գյուղատնտեսը, տու-
ջարկում են կրկնացանել փչացած գյուղատնտեսական
մշակույթը, ըայց ցանքատերը, կոլտնտեսությունը, կոլտնտե-
սականը կամ մենատնտեսը այդ չին անում: Դրա համար
ել Պետապը, որենքի հիման վրա, ապահովազրական վար-
ձաարություն չի տալիս: Բոլորիս էլ հասկանալի յե, թե
ինչու:

Չորրորդ. Պետապը վնասներ չի հատուցում այն դեպքերում յերբ անտեսությունը վնասված տարածության վրա ձեռք չի առնում բույսերի հետագա մշակման և խրնամքի այն բոլոր ձեռնարկումները, վոր սովորաբար կիրառում են այլ անտեսություններ տվյալ վայրում, վնասները պակասեցնելու համար, որինակ, բուկլից, քաղհան, ջրում և դա միանգամայն ճիշտ է: Չի կարելի թույլ տալ, վոր ցանքատերը նման անանտեսվար վերաբերմունք ցույց տա վնասված գյուղատնտեսական մշակույթին և վոչ մի միջոց ձեռք չառնի նրա հետագա մշակման ուղղությամբ:

Հինգերորդ. Յեթե տարերային աղետը տեղի յե ունեցել տարվա այնպիսի ժամանակ, յերբ այդ շրջանի կամ գյուղի ու տվյալ տարվա պայմաններով վնասված գյուղատնտեսական մշակույթի բերքն արդեն պետք է հավաքված լիներ: Յեվ դա միանգամայն ճիշտ է: Իժևախտաբար կան դեռևս այնպիսի անտեսություններ, վորոնք չեն հետևում իրենց գույքին, ժամանակին չեն հավաքում արդեն իսկ հասունացած բերքը և հանկարծ մի քանի որից հետո մի վորևե տարերային աղետից, դիցուք ուժեղ կարկրից, փշանում է ամբողջ բերքը: Իհարկե, դրա համար վոչ միայն չպետք է վնասներ հատուցել, այլ և անանտեսվարության համար պետք է պատասխանատվության յենթարկել մեղավորներին:

Վեցերորդ. Յեթե վնասված տարածության վրա մինչև լուծարքային ակտ կազմելը անտեսությունն անատուններ կարածացնի, բերքահավաք կկատարի խոտի, կանաչ կերի կամ սիլոսի համար, կամ ել թույլ կտա այնպիսի գործողություններ, վորոնք պակասեցնում են տարերային աղետից հետո մնացած բերքը: Այս ել միանգամայն ճիշտ է, քանի վոր չի կարելի բերքը հավաքել մինչև հանձնաժողովի կողմից վնասված մշակույթը գննելն ու վնասների տեղուք վորոշելը:

Յոթերորդ. Վնասները չեն հատուցվում, յեթե գյու-

դատնտեսական մշակույթների տերը՝ կոլտնտեսությունը, կոլտնտեսականն ու մենատնտեսը թագցնում են ցուցակագրությունից այն գյուղատնտեսական մշակույթների ցանքերը, վորոնք յենթակա յեն կոպարային ապահովագրության: Այս ել հասկանալի յե: Յեթե թագցրել ես, ուրեմն գյուղատնտեսական մշակույթն ապահովագրված չի համարվում, հետեապես վրասները չեն կարող վճարվել:

Յեւ, վերջապես վրասները չեն հատուցվում, յեթե վրասված կամ փչացած գյուղատնտեսական մշակույթների տերը վրասի մասին չի հայտնում, գյուղատնտեսական մշակույթի վրասվելու հանգամանքը հաստատելուց 5 որվա ընթացքում, ինչպես նաև յեթե հայտարարությունը վրասների մասին տրված ե բերքահավաքից հետո: Ինքնըստինքյան պարզ ե, վոր ուշ տրված կամ բերքահավաքից հետո տրված հայտարարության հիման վրա չի կարելի ճիշտ վորոշել վրասի չափը, հետեապես, չի կարելի և վրասներ վճարել:


Գ Լ Ո Ւ Թ 3

ՀՐԳԵՀՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ՏԱՐԵՐՍՅԻ և ԱՂԵՏՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՊՍՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

Մենք բոլորս ել լավ պետք ե գիտենանք, վոր կոպարային կարգով կոլտնտեսություններում ապահովագրվում են զանազան տեսակի շենքեր, արդյունաբերական ձեռնարկություններ սարքավորման հետ, գյուղատնտեսական ինվենտար, տրանսպորտային միջոցներ, ապրանքներ և նյութեր, ինչպես նաև դաշտային ու մարզագեանային արտադրանք:

Մենք պետք ե գիտենանք նաև, վոր կոլտնտեսություններում այդ ամբողջ գույքն ապահովագրվում ե հրդեհից, կայծակահարությունից, հեղեղումից, յերկրաշարժից, փոթորկից, մրրկից, տարածից, սողուններից և փլզումնե-

82642
A



քից: Այնուհետև, Պետապը հատուցում է փասաները այն դեպքերում միայն, յեթե գույքի փչացման պատճառը թված տարերային աղետներն են յեղել և դժբախտ դեպքերը, վորոնք տեղի յեն ունեցել ապահովագրվողից — գույքատիրոջից անկախ:

Առանձին կոլանտեսություններ, լավ չիմանալով թե ինչից է ապահովագրվում իրենց գույքը, պահանջում են Պետապից հատուցել զանազան տեսակի փասաներ, վորոնք առաջ են յեկել այնպիսի պատճառներից, վորոնցից այդ գույքն ապահովագրված չի յեղել:

Ահա ձեզ մի որինակ. —

Մի կոլանտեսության ախոռի կառուրը փլվել է, քանի վոր շենքը հին է յեղել և գերանները փտել են: Այդ կոլանտեսությունը պահանջ է առաջադրել փասար վճարելու մասին: Բայց վորտեղ է ասված, վոր ախոռն ապահովագրվում է նրա կառուրի քանդվելուց, վորը տեղի կունենա գերանների փտելուց:

Իհարկե, Պետապը փասաները չի վճարել, քանի վոր դա տարերային աղետ չէ, այլ ուղղակի անտեսավարություն:

Մի այլ կոլանտեսություն պահանջում է Պետապից վճարել այն գույքի արժեքը, վորը նրանից գողացել են: Այս դեպքում ել Պետապը մերժել է, քանի վոր կոլանտեսությունը, ինչպես նաև յուրաքանչյուր գույքատեր պարտավոր է լավ պաշտպանել իր գույքը:

Ի՞նչ պե՛տ է անի յուրաքանչյուր կոլանտեսություն, կոլանտեսակա՛ն յեվ մենասնեսն սարերային աղետներ կանխելու համար

Կենդանարուծության վերելքի և զարգացման ու սոցիալիստական դաշտերի բերքատվության բարձրացման խնդիրը, նմանապես պայքարը մեր ամբողջ աշխատանքի վորակի համար, գյուղատնտեսության սոցիալիստական վե-

բակառուցման պլանում կենտրոնական տեղ են զբաղում: Անասունների, ինվենտարի, մեքենաների, շենքերի և այլ գույքի լավագույն պահպանումը, ինչպես նաև ակտիվ պայքարն անասունների հոտի պահպանման և զարգացման համար, ազրոնոմիական և հակահրդեհային կանոնների կատարման համար, անշուշտ յուրաքանչյուր կոլտնտեսութեան, կոլտնտեսականի և մենատնտեսի՝ հարևորագույն ինչդիրներից մեկն է հանդիսանում: Ուստի, կոլտնտեսութեանը, կոլտնտեսականն ու այլ աշխատավորներ, պարտավոր են պահպանել այն՝ հակահրդեհային կանոնների համաձայն և բոլոր անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել հրդեհները կանխելու և իրենց գույքն ամեն տեսակի վնասներից և փչացումից պաշտպանելու համար:

Մասնավորապես կոլտնտեսութեաններն ու կոլտնտեսականները, պետք է հետևեն՝ վորպեսզի՝ առաջին, ծրխանցքներն ու վառարանները, ինչպես նաև լուծավորութեանը կանոնավոր լինեն, յեւկրօղ—զգուշաբար վարվեն կրակի հետ, յերօղ — խոտի դեղերի, ամբարների և պահեստների մոտ խարուկիներ չփռեն և չծխեն, չորօղ—ցորեն կալսելու ժամանակ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնվեն կայծերից ու այլ պատճառներով առաջացող հրդեհների դեմ, հիմնգեօղ—շարժիչների, տրակտորների մոտ վառելիքի ապահով պահեստներ շինվեն կերոսինի, նավթի, բենզինի և այլն համար և վերջապես, յերեխաները չխաղան կրակի հետ:

Շատ բնական է, վոր այս պահանջները չկատարելու դեպքում, հաճախ հրդեհներ են առաջանում, վորոնք վորնչնչացնում են ամբողջ գույքը: Սովորաբար կոլտնտեսային ունեցվածքը կենտրոնացած է լինում մեկ տեղում՝ այստեղ է և խոտը, և անասունների ախոռը, այստեղ է և պահեստը և այլն: Այժմ քիչ չեն միլիոնատեր կոլտնտեսութեաններ և դրանց թիվն օր-ըստ-օրե ավելանում է: Այդ

ամբողջ միլիոնավոր գույքը պետք է ուշի-ուշով պաշտպանել ինչպես դասակարգային թշնամուց, նույնպես և հրդեհներից ու տարերային աղետներից:

Ինչ պարսակալություն ունեն կոլսնեստությունն, կոլսրնեսակալնո՞ յեմ մենասնեսը հրդեհ, հեղեղում յեմ այլն առաջանալու դեպքում:

Մենք բոլորս ել գիտենք, վոր վորքան ել լավ են պաշտպանում գույքը, այնուամենայնիվ տեղի չեն ունենում գժբախտ դեպքեր և տարերային աղետներ՝ հրդեհներ, հեղեղումներ, լեկրաշարժներ և այլն, վորոնք մեծ վնասներ են պատճառում տնտեսութեանը:

Տե՛վ ահա չերբ կոլտնտեսութեան մեջ նման աղետ և պատահում և վնասներ պատճառում նրան, կոլտնտեսութեան վարչութունը պարտավոր ե՛ առաջին՝ անմիջապես և համենայն դեպս վոչ ուշ քան հրդեհի կամ այլ տարերային աղետի տեղի ունենալուց հետո չերկու որվա ընթացքում, գրավոր հայտնել այդ մասին շրջանային ապահովագրական տեսչութեանը:

Շրջանային ապահովագրական հանձնաժողովի աշխատանքը թեթևացնելու համար, այդ հայտարարութեան մեջ պետք է մանրամասն ցույց տրված լինի թե ինչպիսի տարերային աղետ (հրդեհ, հեղեղում և այլն) և տեղի ունեցել և լերբ: Բացի այդ, պետք է ճշտորեն նշված լինի թե ինչպիսի գույք և վնասվել կամ փչացել ու պատճառած վնասի լինթաղրվող գումարը: Յեկրորդ — բոլոր անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, վորպեսզի պակասի վնասների չափը, այն ե՛ փրկել գույքը, նախապահպանել այն հետագա փչացումից: Յերրորդ — պահպանել վնասված գույքի մնացորդները մինչև շրջանային ապահովագրական հանձնաժողովի գալն ու լուծարքային ակտ կազմելը: Վերջապես կոլտնտեսութեան վարչութունը պետք է կազ-

մակերպել իր փուլի պաշտպանութեան գործն, ինչպես
հրգեհին, հեղեղումի և այլ աղետի ժամանակ, նույնպես և
գլխախցի հեռու հատուկ ուշադրութեամբ պետք է դարձնել
այնպիսի առարկաների վրա, վորոնք շուտ են փչանում,
այն է՝ ներմացվի, հացահատիկի, ալյուրի, չամբուրի, ծը-
խախտի և այլն գլխադասնոսական արդյունքների, ինչ-
պես նաև գլխադասնոսական մեքենաների, ինվենտարի
վրաստանի թույլ վե ղմագուշանախ մարմարայան
արևայաբողբ շատ կարևոր է. Եսրայի կամ Եսրայան
ամ Եսրայան գամ հրգեհին ժամանակ մի վորևե առարկա
կրակից չի փչանում, այլ թրջվում է միայն և յիթե ժա-
մանակին մաքրվի կեղտից, ապա կարելի յե փրկել և փոշ
մի վաաց չի լինիս յամաց մարգարեանախ մարմարայան
յա ղմագուշանախ թու մարմար մարմար յի ամ
վոր դեպքերում է կոլոսեստոթյունը գրվում ապահովա-
գրական վարձատրություն ստանալու իրավունքից հրգեհին,
հեղեղման, յերկրաբան յեվ այլ քաներային աղեսների
պահանաած վնասների համար վորոնցից ապահովա-
մանամի մարմար գրված է այդ գույրը:

Սենք արդեն ասացինք, վոր ապահովագրական վար-
ձատրութեան չի տրվում այն բոլոր դեպքերում, յերբ
գույրը վաստում կամ փչանում է ապահովագրական կո-
լոսեստոթյան և այլ տնտեսութեան մեղքով, այսինքն՝
առաջին—յեթե վասան տեղի յե ունեցել բացահայտ ան-
տրտեսութեան և հանրային սեփականութեան պաշտ-
պանութեան բացակայութեան հետևանքով, յերկրորդ—յեթե
վաստված տնտեսութեանը չի պահպանել հակահրգեհային
պաշտպանութեան կանոնները, կոպիտ անզգուշութեամբ և
վարվել կրակի հետ, այսինքն, անկանոն է պահել ծխնե-
լուղները, վառարանները, խարուղի և վառել շինքի, խո-
տաղեղի մոտ, անզգուշ է պահել կերոսինը, նավթը, բեն-
զինը և այլն, վորից հրգեհն է առաջացել, յերկրորդ—յեթե

գույքատերը հրդեհել է ապահովագրված գույքը: Բացի այդ, ապահովագրվողը վարձատրուելուն չի ստանում այն դեպքում, յեթե թագնում է ցուցակագրուելունից այն գույքը, վորը նշեալ յե պարտադիր ապահովագրուելոյան: Յեթե տուժաւ անտեսուելունը յերկու որվա ընթացքում չի հայտնում իր կրած վնասների մասին:

Այստեղ մի անգամ յեմս պեժ է հիշեցնել, վոր ապահովագրական վարձատրուլունը չի կարող փաստրեն վնասված կամ փչացած գույքի ապահովագրական գումարից յեմ իսկական արժեքից ավելի բարձր յինել: Ուստի, յեթե կոյսնեսուլունը կամ այլ սնեսուլուն իր վնասների մասին կեղծ տեղեկուլուններ է տալիս ապահովագրական վարձատրուլուն ստանալու համար, ապա նա վոչ միայն գրկում է այդ վարձատրուլունից, այլ յեմ քեական պատասխանատրության է յենթարկվում:

Յեմ դա միանգամայն ճիշտ է, քանի վոր նա ուզում է ստանալ պետուելունից այն, ինչ վոր նրան չի հասնում:

Պետալը խստրեն հետեմում է, վորպեսզի նրա քջանալին ապահովագրական տեսչուլունները չձգձգեն վնասների վնարումը: Յուրախանլուր կոյսնեսուլուն, կոյսնեսական կամ մենասնես, յեթե նրա կրած վնասները ժամանակին չեն վնարում պեժ է բողոքի Պետալի վարչուլունը հետեմյալ հասցելով՝ Յերեման, Նալբանդյան փողոց № 64:

Բոլոր ստացված բողոքները բնեմում են վոչ ուժ բան 10 որվա ընթացում:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0000918

074.

104

ԳԻՆԸ 30 ԿՐԴ
ԿՐԸ
ԿՐԸ
ԿՐԸ

ЦЕНА

11
24978

М. А. САРКИСЯН

**Как скорее получить страховое
вознаграждение**

Реклам-Издат-Бюро—Ереван 1937 г.